

ճամբոյ կեցիկն և մոյրերնէն անպամ չէր անցնէր թէ թուչնոց ձապերը սը նուցանողը՝ թողը իր խաշակիր ու խ տաւորները որ կորսուին թշուառութեամբ . իրենց տգիտութիւնը պատրանքներ կառաւելոյր , անանկ որ ամեն տեսածնին իրբեւ հրաշալիք մը կը համարէին . միշտ կը կարծէին թէ իրենց ուխտատեղւոյն մօտ են հասնելու :

Քաղաք մը կամ ամրոց մը տեսնուած խտներ գիւղացի տղայք կը հարցնէին թէ այդ է արդեօք Արուսաղէմ . շատ մը աղատ տէրեր , որ իրենց կեանքը գիւղական ամրոցներու մէջ անցուցած էին , սարուկներէն աւելի բան չէին գիտեր . իրենց հետ կը տանէին ձկնորսութեան եւ սրսի գործիներ և կրնթանային յառաջոյ ունենալով շանց վահմակ մը և պարզ բազէն բուռին վրայ . և կերու խումով Արուսաղէմ հասնիլ ակն ունէին և յուշներ Ասիոյ իրենց գղեակներուն անհետեւ թերթութիւնը . Այս լինոց հանուր մտաց յաւղման միջոցին շերեւեցաւ իմաստուն սը որ բանակահութեան ձայնը լսելի ընէր : Աեզիպոսը տարօրինակ երևցածը այն առան խիստ բնական բան մը կերեւար . և արդարեւ այլ ընդ այլոց թատերահանդէսը , սրուն մէջ ամեն սք գեր մը ունէր , ապագայ սերնդոց համար մի այն իբրեւ խաղ պիտի ներկայանար :

(Միտ . պատմութիւն խաշակրայ)

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Թ . Կ Ո Ի Թ Ի Ի Ն
Կ Ա Ն Ա Ն Ց

(Շարունակութիւն , տես թիւ 6*)

Երբ մեր եկեղեցւոյ ատոյաններու տաժան բանտարկութիւն և շղթաներ կը լսեմք պատմութեանց էջերէն արդարեւ մեծ ամօթ կը տիրէ ճակատներուս վրայ , անոնք՝ այն սիրավառ կրօնասէր գիւցազունք սուրբ Եկեղեցւոյ Աւետարանի պայծառութեան համար մահ , գերութիւն , ընտանեաց , ընկից և փառաց սէրը մերժելով շղթայակապ բանտերու մէջ կը նեղուէին , իսկ մեք անբանդ անշղթայ ազատ և արձակ սէր , Աւետարան և Եկեղեցին թողնելու մօտ ենք , ո՞վ կ'ըսէ թէ թողած ալ չենք , Աւետարան և Եկեղեցին սուրբ սէր կը պահանջէ , մեք ատերութեամբ կը պատասխանեմք , նա ճշմարտութիւն և պարզութիւն կ'ուսուցանէ , մեք ստութեան և խարդախութեան ետեւէն կ'երթանք , նա ամեն ատեն աղօթքի մէջ ըլլալ կ'ուսուցանէ , որ փորձութեան չըհանդիպինք , մեք կամ ծուրութեամբ կամ պարբերով , կամ արբէնալով կանցնենք . նա սրբութիւն կը քարոզէ մեք շնութիւն պարծենալով ընկերներուս կը պատմեմք . Մեր երանելի նախարարներուն , արդարեւ մէկ վերջին արկած մի կար , նա միայն կարէր զանոնք յաղթահարել . բայց Աստուած կը խնայէր , այն է սրբենի կանայք . թէ որ այն նախանձելի վարուց իրենք զիրենք չը տալու լինէին , ու սանձարձակ օր գտած երկվարի նման իրենց կրից՝ չար ցանկութեանց լսէին , այն է որ այն ընտիր նախարարները պիտի լքանէր . պիտի խորտակէր անոնց աննկուն հաւատքը . սէր , այն դիցուհի կանայք , այն պաշտօնի տիկնայք կամաւ և յօժարութեամբ իրենց ա

բանց ցանկալի բաժնին մասնակից ե-
 ղան իրենց խառամբեր վարուք, չնո
 հաւատար, կարգի մարգարտաշար ե-
 ղիչէն, տնս թէ ինչպէս իրենց արանց
 հետ մէկ շունչ մէկ հոգի Քրիստոսի
 Աւետարան և Յկեղեցին աննկուն պա-
 հելու համար բրեր են, ինչ որ կը պա-
 հանջէր բանաւորութիւն, մեր Արար-
 չին տարիք հաճոյական պատու:

Ինչպէս մեր մարդիկս անկնկոր կը
 կենամք այն վէհ անձանց յիշատակաց
 առաջ, նոյնպէս և կանայք կը շառա-
 գընեն, երբ այն փափուկ կանանց խըս-
 տամբեր վարուց պատմութիւնը կը
 լսեն, Եթէ այս բարի ու առաքինի
 տիկնայք իրենց դիւցազն էրիկներու
 գործին ու առաքինութեան բաժա-
 նորդ չը լինէին, իրենց բարի վարք չը
 պատասխաններ անոնց համբերութեան
 ՚ի հարկէ գործի աւարտին չը հա-
 սած պիտի ընկձէին:

Մեր սիրելի մայրեր, մեր պատուա-
 կան քոյրեր այսպէս մեզի սատար կըլ-
 լան իրենց խոհական տիկնութեամբ,
 փորձէն առնելով կ'ըսենք թէ ոչ, ե-
 րանի թէ ըսածս չը ճշտուէր, բռնաբա-
 բուած եմ ՚ի սէր իրենց ցաւակցելով
 ըսել, ուստի թող իրենք ալ իբրև
 ճշմարիտ բարեկամի խրատ ընդունեն
 և ոչ թէ թշնամիի ամբատանութիւն
 կարգան:

Տիկնայք Հայոց օր քան զօր իրենց
 վսեմ՝ ծանրաբարոյութիւնը թեթե-
 սօլիկութեան հետ կը փոխեն, այն ևս
 առժեղով, հարկաւ պիտի ըսեն իմ
 աղնիւ քոյրեր թէ դարը այնպէս կը
 բերէ, լուսաւորութեան վճիտ ար-
 դիւնքն է, հարկ չը կայ բու տեսու-
 սութեան, եթէ կուզես բոլոր աղպե-
 րու վրայ նայէ, թէ որ անոնցմէ աւել-
 լի կը գտնես զվեզ սպա թէ խօսէ,
 Ես իմ խօսելիք ետ շ'առնելէն զինի
 կ'աւելցնեմ թէ, ընդհանուր աղբայ

վրայ աչք ձգելու հարկ չը կայ, մոր-
 թիւն ուր որ լինի վատ է, մեր ուրիշ
 ազգաց բարեմասնութիւնը առնելու
 ու զայն դարգայնելու իրաւունքը ու-
 նիմք, իսկ անոնց մորութիւն վատա-
 բանելու ոչ, լուսաւորութիւն և իւր
 վճիտ արդիւնք արդարեւ խիստ մեծ
 բան է, զի այն է՝ որ մտորուս գերու-
 պատուութիւն կուտայ, անով է՝ որ
 մարդը անասունէն, մարդը իսկ մար-
 դէն կը տարբերի, անով պէտք է վեր-
 ջապէս մարդկան հաւատարակչու-
 թիւն, ու մարդկանց իրաւունք եւ
 սրտաբքը յայտնուի, որն մինչև ցարդ
 բռնաբարուած է, մարդկութեան եւ
 զական իրաւունքը մութ խորշերու
 մէջ շղթայած են, ու նոյնպէս և կա-
 նանց բարձր ձայնը ժխտ անկիւննե-
 րու մէջ խղտեր են, Ես կանանց ձայն
 կը ծանչնամ ու կուզեմ որ իրենց գե-
 րակայ անղը ունենան, այն է մարդ-
 կութեան հզօր նաւահանգիստը իւր
 վսեմ պատիւն ունենայ, իւր յարգի
 կարծիքը ազատ լինի անտեսելու խոր-
 հելու, գործելու և բարձր ձայնով խօ-
 սելու, իւր մէկ հատիկ շնորհը վրայէն
 չըհանելով այն է պարկեշտութիւն, կին
 մը երբ պարկեշտ է ընկերական սուրբ
 սիրով կ'ապրի, գլուխ խոհական է,
 տաղանդ ունի, պէտք է համագոր ձայն
 ունենայ բոլոր բարենպաստակ իրողու-
 թեանց մէջ, կին մը երբ գործել գի-
 տէ, ժողովալ է, ու մէկ տան և մէկ
 գերդաստանի ղեկը կը դարձնէ անվը-
 տանդ, պէտք է քաղաքի մը ու ընդ-
 հանուր աշխարհի մը իշխան ըլլայ եւ
 սնորէն:

Ար անսնես մայրիկս իմ կարծիքս,
 ես կանանց ազատութեան թշնամի
 չեմ, ու ինչ բան և ինչ պատիւ որ կը
 պատկանի մէկ բարի մարդու մը նոյն
 և բարի կնոջ մը կը պատկանի և պէտք
 է ունենայ:

Յուսք սրտի կ'ըսեմ մարդկութեան արդար իրաւանց բռնաբարողաց հետ գիտես թէ ներքին դաշնակցութիւն մի կայ կանանց հետ . որք լսիրչ և վատ ընթացք ունին , մարդեր ընդհանրաւ սէս քանի մը ճիւղի կը բաժնուին , ան զգայ անտարբեր , զգայուն մոլի , խռհեմ գործունեայ , այս երեք կարգ մարդկանց , անզոյս եւ անտարբեր միշտ ստրուկ է , թէ իւր բանաւորութեան բռնաբարողին առջ թէ կու նանց ազգի քով , երբէք իւր բանավորութիւն իւր խի աչքին չի զարներ , ուր կը մնայ իւր իրաւունք և պարտքը ճանաչել , ու կանանց պատուական ազգը յարգել , իսկ վատը ատել . այս տեսակ մարդկանց բովանդակ շարժումը բնութեան մըման պարտական է , ոչ կամաց և ոչ դատման առ 'ի չտրն և 'ի բարին :

Զգայուն ու մոլի կարգ այն տեսակ մարդիկն են , որ անտարբեր չեն լուկրդան բարին և չարը , բայց չար կըրից յայլթուած ըրալով միշտ հակամէտ են , սմանք ուտելու , սմանք հագնելու և ոմանք հեշտալեաց , և այլն , ուստի ասանք կամաց տակ ճնշուած ըրալով և չար կրից հպատակ ոչ ինչ բարիք ձեռքը կը բերեն , իսկ խոհական և գործունեայն միշտ քաջակշիռ եւ աշխուժ ջանքով կը մըցի բռնութեան լուծը փշտել , որ և իցէ բանաւորի վնասող թակարթը կը խորտակէ , զի գիտէ որ մարդուն մտաց քայլախոխին արգելք ոչ միշտ վնասակար է , ու կը ջանայ միշտ մարդկանց տատար լինող ազգը հրահանգել և կատարել լագործել զանի . որ իւր ազնիւ վարիք ճանաչէ և ըստ այն մը գործէ , այն է՝ կանայք և անոնց դատտիրարութիւն :

Այս ցեղորքան որ ընտիր է , նոյնքան ալ տակաւաթիւ ուստի իրենց սկըղբունք հղոր , բայց իրենք անզոր , թէ և

երկինք անոնց պիտի զօրաւիկ լինի երբ աշխարհի բռնութեան յաղթեն իրենց և բոլոր մարդկանց պարտք եւ իրաւունք ճանաչել տան ու ազատութեան դրօշակը օրինաց՝ Աստուածային եւ մարդկային օրինաց տառերով պարզեն , այն է՝ որ դուք եւս ձեր արժանալայ յել իրաւունքով կը ձոխանաք . Այս գեղեցիկ սկզբանց դէմ մեծ թումը դնող ոչ բռնութիւն է՝ որ մարդկութեան սխերիմն է . այլ կանանց անբարոյական և անդատտիրակ կեանքն է , երբ կիները բարոյականի մէջ փայլին դատտիրարակեալ ըլլան . ոչ ինչ արգելք կարէ խոհականաց ձեռնարկը խափանել , ընտանեկան և ընկերական դատտիրարութեան վերայ խօսելիքս կը վերջացնեմ , նորէն յիշելով մարդ պարտականութի . այն է՝ սիրտեր պատրաստել սիրելու ու սիրուելու . բոլոր անբարոյական մառտխուղը կը ծագի սերել ու սիրուիլ չը գիտնալու դասէն . ինչպէս որ խաւար կ'առաջանայ լուսոյ պակսելէն :

Ընդհանրական դատտիրարութիւն աւելի փայլուն և զգալի կը լինի երբ տնտեսական և ընտանեկան դատտիրարութիւն շատ ըլլայ . սա անոնցմով որքան որ փայլ կուենայ , նոյնքան և անոնք կը վսեմանան , տիկնանց ընդհանրական դատտիրարութեան դատը որքան որ անհրաժեշտ է , նոյնքան ալ փառաւոր և որ տիկին որ այս ազնիւ դատտիրարութեան մէջ զարգացած է , գիտես թէ դիցուհի մը քան թէ կին մ' է . երկնային հրեշտակը , քան թէ մսազանկուած մը կը շրջի , սիրտ և հոգի կը անսնուի , քան թէ մոլութեան դարան : Ի՞նչ է ընդհանրական դատտիրարութիւն , եթէ ոչ մտաց և հոգւոյ անունդ , այն է՝ առաքինութիւն , խղճի խաղաղ և զուարթ սարկու սահման :

Որոյ որ հարցնես, իւր ներքին համոզման սրտասխանելու պայմանաւ, թէ գու մէկ գերագոյն անսկիզբն եւ անվերջ տէր մը և Աստուած մը կրճաւ նսւնես, այն կ'ըսէ, ու անոր յայտնեալ ճշմարտութեան կը հաւատան, նոյնպէս առանց վարանելու այն կ'ըսէ. սիրտը առանց ընկերին վնասելու բրած գործով երբ գոհ կը լինի, այն տեսակ գործաւնութիւնքը կը յարգէ թէ ոչ, այն կը յարգեմ կ'ըսէ: Ուրիշ խօսքով հաւատք և գործ կը սիրէ, թէ ոչ, այն կը սիրեմ կ'ըսէ. այս հաւատք և գործ ընդհանրական դաստիարակութիւն կ'անուանեմ, որուն պատճառը յայտնի է, թէ չկայ մարդ մը որ կրօնք չունենայ, ու նոյնպէս չը կայ արարած մը որ առաքինութեան արժէքը չի ճանաչէ, արդարեւ կրօնքը մարդկանց մէջ շատ զանազան է, որուն կեդրոնը մի է, ու նոյնպէս առաքինութիւն մարթ է զանազան ճաշակաց զանազան համայնքաց միշտ կրօնք և առաքինութիւն ընդ տիեզերքս պիտի մնայ. մինչև ամեն սիրտ և ամեն խելիք զգայ մի և նոյն երանակաւ: Այն է մի հօտ և մի հովիւ լինելու պայմանաւ:

Քանի որ միտքս կրօնամոլ կերպով կանանց ընդհանրական դաստիարակութեան վրայ խօսիլ չէ, պէտք է, որ ընթերցող տիկին իմանայ որ ես ընդհանրական դաստիարակութիւն լսելով կ'իմանամ կրօնք և մարդու բարոյական ձիրքեր՝ այն է առաքինութիւնք, ասոր պատճառն ալ յայտնի է. զի երբ ներհուն փիլիսոփային, Ազատեմեայի առաջին մարդուն ու Ամերիկայի, Չարնի վայրենի մարդուն կրօնական զգացումը մի և նոյն է. ինչ որ փիլիսոփան կզգայ կրօնէն ծագած երջանկութեան մասին. նոյն կզգայ և վայրենին ու գուցէ աւելի, այս կրնճստո նախագատու թիւնք բացատրել

պէտք է, ուստի պարզեմք: Այն վայրենւոյն և փիլիսոփային զգացած մի և նոյն է, բայց փիլիսոփայն իւր ունեցած կրօնքը յլատակ սահմանի մէջ զնկելով ու կողորիկ խնտաով ցանկալի կը ցուցունէ. իսկ վայրենին որ լաւ կըզգայ ու կըշտ կը բացատրէ գէշ կը նկարագրէ. վարձէն աւելի կը պարզուի ուստի փորձէն ցուցունէր: Փիլիսոփան իւր կրօնի և համոզման գէմի եղած թշնամանքը իւր սուր մտաց զէնքերով կը լուծէ. իսկ վայրենին՝ որ զայն չունի իւր կիզքը և ձեռքի զէնքը կը գործածէ, բռել կուզեմ մի և նոյն զգայման մէջ են համոզման եւ զգացման մտտին վայրենին և փիլիսոփան: Ահա ասկէ կը հետեւի թէ կրօնք ընդհանրական է, կուզես մշակի միտկերոյ կունենաս կուզես թող տուր զանազան կը գտնես. բայց ոչ առանց կրօնի: Յայտնի ճշմարտութիւն մի է այս:

Ուստի ես իւրաքանչիւր մարդու համազումը ու կրօնական զգացումը իրեն թող կ'ուտամ առանց բռնանալու, թէ այս լու է, այն գէշ է, եւ ես խն յայտնի կը ցուցունեմ եւ կը ցանկամ որ ամենուն ալ խմնա, պէս բլայ. զի բնական է, ամեն մարդ կը ցանկայ իրեն լսեն ու իրեն հետեւին. իմ կրօնքս Աւետարանի սուրբ սկզբանց վրայ է, ու Հայաստանեայ Առաքելական սուրբ եկեղեցւոյ ազատ վարդապետութեանց համաձայն. զի ես աւետարանի սկզբանց պէս ժողովողական, ընկերական հաւասարութեան սկզբունք տեղ մը չեմ տեսնար՝ բոլոր սիրով իրարու հետ եղբոր պէս կը կապէ կը ձուլէ ու մէկ մարմին կառնէ մէկ երկնաւոր Հօր որդիք կը յորինէ ՚ի Քրիստոս Յիսուս, այս երկնային և Աստուծոյ պատկան հեղինակութիւն այնչափ սիրուն է, որ երբէք սիրտ մը որ առանց կամեմ

ուանոյ անկէ չը սիրելու . ամեն սրտի հետ իբրեւ ճշմարիտ բարեկամ կը խօսի և 'ի բարին կը հրաւիրէ : Ձեռք ուրանար թէ ուրիշ կրօնից սկզբունքները դարձեալ երջանկացուցիչ են ու սիրուն . բայց երբէք աւետարանի հաւասարակշռութիւն չունին , անոր երկնային հեղինակի սիրտը եւ դուր թը չունին , որն խափնի վրայ տարածուած կը ցանկոյ ծարաւի եմ , սյն է բազուկներս զձեզ դրկելու , սիրտս բզձեզ սիրելու և բիմբս զձեզ ճաշակելու համար տարածած , բոլորքս ու պսոքս կը կենամ . որ դուք իմ բուկրքանս համեմատ իբրեւ եղբայր իրար դրկէք իրար սիրէք մինչև իմ հօր քով հասնիք ինձ հետ թագաւորելու :

Աւետարան և անոր աստուածորդի հեղինակն, ինձ համար կենաց արեւ մի է ու սնունդ տուող մէկ հատիկ աղբիւր մարդկանց , սրօնց որ անոր ձայնին լսել կուզեն անոնք այս երջանկութիւն կը վայելեն . Հայրաստանեաց եկեղեցւոյ ազատ վարդապետութեան կը հետեւիմ ու ինձ համար սուրբ Աւետարանի թարգմանութիւն է և ոչ թէ այլ ինչ , հոս ըսել կուզեմ որ Յունական և Ղաթինական եկեղեցիներէն բաւական աւելորդները բռնի կամ համոզմամբ առած է , որոնք ինձ համար ոչ սիրելի են և ոչ խոտելի , վասն զի էական մաս չեն կազմեր ըստ Աստուածաբանից և ես ակորժակ չունիմ անոնք գրելու : Քանի որ նպատակը կրօնամոլ կերպով առաջ երթալ չէ , այլ ընդհանրական դաստիարակութեան սէտքը կանանց զգալի ընել , ու անոր կարեւորութիւնը ցուցունել . կաղաչեմ իմ սիրելի մայրերուս ու պատուական քոյրերուս որ իմ ճշմարտախօսութեանս պատճառներ ու հետեւութիւններ չը բերեն ,

ևս Հայ եմ , Հայսւ տղայ և Հայեր 'ի սրտէ սիրող . անոնց ամեն բարի ունակութիւնքը կը յարգեմ ինչպէս որ իրենք կը մեծարեն : Այսպէս մեր փոքր արդիւղութենէն ելնէք , ու սկսիմք մեր ընդհանրական դաստիարակութեան ետեւէ լրջալ :

Ընդհանրական դաստիարակութիւնը , ինչպէս վերը ըսի կրօնք և առաքինութիւնք կրմանամ , ուստի ընթերցող տիկին մայրես և քոյրերս թող իբրեւ վարդապետի քարոզ չընկատեն , վասն զի շատեր անոր շարժման , շատեր անոր ձայնին , շատեր անոր թերիներ թուելու կ'երթան լսելու . եւ ոչ թէ Աստուծոյ կողմէն իրենց թարգման զնա գիտնալով կամ թէ երբ մուրութեանց վրայ կը խօսի հարուածունիս ու 'ի սրտէ զժամն իրենց թերութեան վրայ , երբ առաքինութեանց վրայ կը խօսի , թէ որ ունին վառս տան Աստուծոյ . ըսի դարձեալ կրտմ թող իբրեւ անպէտ բան չը նկատեն իմ տաղեր , այն ես կը խոստովանիմ թէ շատ թերի է . բայց 'ի սեր անոնց իւր թերութիւնք կը ծածկէ , զի անոնց շահը կը մտածէ և ոչ այլ ինչ :

Երիկ մարդ մը երբ 'ի կրօնս անտարբեր է , և ոչ թէ անկրօն . զի ինձ համար անկրօն որ չը կայ . այլ անտարբեր շատ , այն երբ երիկ մարդ մը անտարբեր է 'ի կրօնս իբրեւ անասուն կ'ապրի , խիտ քիչ իբր գազան , բայց երբ կին մը 'ի կրօնս անտարբեր կ'ապրի միշտ իբր գազան կ'ապրի և շատ քիչ առնէ իբր անասուն :

Հաստատուելու հարկ չը կայ . զի աւմեն մարդ կը տեսնէ կզգայ և կը կշռէ թէ կրօնիմէջ անտարբեր եղողը , մարդ չէ . զի մարդուն բանաւորին համար օրէնք պէտք է և բարոյական . օրէնք և բարոյական վճիտ ընող կամ գոյն ունենալ ցցնող կրօնքն է . ինչպէս որ գոյներ միշտ կարոտ են լուսոյ . նոյն

պէս օրէնք և բարոյական կարօտ է կը
 բօնի, հոգ չէ կրօնի ճշմարտութեան եւ
 ստույգութեան, զի այն որ ճշմարտութիւն
 օրինաց ու բարոյականին փայլը վսեմ
 կրնէ ու այն որ ստույգութիւն օրինաց ու
 բարոյականին տեսքը նսեմ կը ձգէ ու
 աղտոտ: Քանի որ մարդու մը ճիշդ
 մարտ մարդու մը օրէնք ու բարոյ-
 ական պէտք է. հարկ է որ կրօնի թէ
 վճիռ թէ եւ նսեմ ջահն ունենայ,
 երբ այն ջահը ունենալու մէջ անտար-
 բեր կը կենայ, չէ նա մարդ այլ անա-
 ոուն, բնութեան օրէնքը համազօր է
 մարդուն ու անասունին անոր համար
 չէ խօքս, այն օրէնքին համար է որ
 մարդկանց բանաւորութիւն կազմու-
 ցանէ ու մարդ կարող կըլլայ պարծե-
 նալու թէ ոյս օրէնք ինձ համար է:

Արօնք ուղղակի յԱստուծոյ կենէ
 ու մարդկանց միտքը կը թելադրէ եւ
 կամքը կը համոզէ անոր հնազանդելու
 և ըստ այնմը բալելու: Ճշմարտ կրօ-
 նի թարգման մեր խիղճն է ու Աս-
 տուծոյ յայտնեալ ճշմարտութեան ան-
 սոյթագ տառ, այն է Սուրբ Գիրք,
 սով որ խղճի նուրբ ձայնին, ու սուրբ
 գրոց յայտնի ճշմարտութեանց ունին
 կը դնէ կը աեսնէ ու կը գուշակէ այս
 դէպքը արարածոց մէկ անսահման Ա-
 րարիչը և անոր սուրբ կամոց սքան
 չելի թելադրութիւնքը, որն մեր իսկ
 բարօրութեան և երջանկութեան սուրբ
 առիթն է: Այնքը երբ իրենց Աստ-
 ուածը ու անոր կամոց սուրբ պա-
 հանջը թէ որ ճանչնան ու զայն բո-
 վանդակ մտաց և ամենայն զօրութե-
 նէ սիրեն, ամենայն ինչ կատարեալ է.
 իսկ և իսկ ընդհանրական դաստիարա-
 կութեան լուսն է. զի սով որ ՚ի բոլոր
 սրտէ կը սիրէ իւր արարիչը և կը կա-
 տարէ անոր սուրբ կամքը, ալ հարկ
 չը մնար ուրիշ ո՛ր կցէ բանի, զի ան-
 թերի կը կատարէ իւր ամեն բարոյա-

կան պարտականութիւն, կին մը երբ
 գիտէ իւր պարտականութեան սրբա-
 նութիւն, ՚ի հարկ է ալ պակաս չի
 թողուր իւր պարտք, այլ անթերի կը
 գործէ:

Այն մը աստուածաբան ըլլալու
 չափ սահման ունի և թէ որ իւր ուշ
 և դադարաւորը ընդարձակէ կրնայ ըլ-
 լալ. և շատ բնութիւն մատենագիր կնիկ-
 ներ կը աեսնենք, բայց հարկ չէ ըստ
 իս կնոջ այնքան ընթանալ, այլ սահ-
 մանաւոր, սյն պէտք է երբ իւր պու-
 րապու մը կը ներէ, այն է երբ որդիս
 ունեցած է ու զանոնք զարգացուցած
 է, մի միայն իւր անպին ժամեր մնա-
 ցեր է իրեն համար ազատ պարտա-
 մանց. իսկ քանի որ այսպէս ժամեր
 դէռ չունի, չեմ կարծեր որ առանց
 խղճի պիտի գործէ, երբ որդին կը
 թուլեան և սնունդի կարօտ է նա
 հարգաց ու գրէ:

Մօր մը համար Աւետարանի պարզ
 միտքը և Կիեղեցւոց սուրբ խորհրդոց
 զօրութիւնը գիտնալ բաւական է,
 անանասական կառավարութիւն գիտ-
 նալու համար պարզ հաշիւները գիտ-
 նալ. ասիկ աւելին ՚ի չարեն է կնոջ
 համար:

Պէտք է կին մը այնքան սեր ունե-
 նայ մեր երկնաւոր Հօր վերայ և անոր
 միտքին որդւոյն Յիսուսի Քրիստոսի
 վրայ, և անոր Սուրբ Հօգւոյն վրայ
 որ մեր շնորհաց մէկ հասիկ աղբիւրն
 է և մեր կենաց առիթ, Աւետարանի
 բարոյական խրատները պէտք է իւր
 կենասական զօրութեան շարժող և կազ-
 տուրող խմանայ ու սիրէ զայն, երկիւ-
 ղած սրտով ու խիղճով, և սրբիկնա-
 քաղաքաւարութիւն քրիստոնեայ ապ-
 րելու անդրդուելի հաւատքը ունենայ:

Անուրանալի ճշմարտութիւն մի է,
 կին մը երբ բոլորով սրախ կը պաշտէ
 իւր Արարիչը, կը մեծարէ կրօնք, ու

կը սիրէ անոնց որ հանձնեցինք և սիրով կը կատարէ . նա խիստ մեծ և սիրելի կերեւնայ բոլոր մարդկանց աչքին . ցանկալի ամեն մտաց և սիրելի միջնուանդամ թշնամեաց , կարելի չէ ասոր շտի սիրաը դպացու մը և գործ ունեցող էրիկ մարդ մը բաղդատուի , զի նա . այն է՝ կին իւր գեղեցիկ սեռով փախուկ զգացմամբ նախագասութիւն կը վայելէ . երբ կին մը այսպէս բոլոր բովանդակ աշխարհ մը կապէ , զի այն տեսակ կին շարհաց տուփ է քան թէ մըրութեան դարան :

Արժան կը տեսնեմ կարճ խօսիչ կանանց ընդհանուր դաստիարակութեան առաջին մասի վրայ , վասն զի երբ նա իւր մօրէն սորուած չէ արարածոյ վրայ աչք անկելով միտքը երկինք թռցնել յաւիտենական Հօր բովելնց կարելի է որ իմ աղքատ ու ասիպ խօքերէն Աստուծոյ անհուն մեծութիւն ճանաչէ , աստուածգիտութեան մեծ հոտոր դրեանք , վարդապետաց ճարտար քարոզներ կը տկարանան մօր մը աստուածախօսութեան բառերու առաջ , երբ նա իւր գոտորիկ կամ մանկիկը պարտեզ տանելով բնութեան գրքի թերթերը կը բանայ իւր սիրելեաց առաջ ու անոր վրայ կը կարդացրնէ իւր մատղաշ և սիրուն մանկանց այն մեծ Աստուծոյ որոնելի գործքեր , կը յարգորէ երկիւղած սրտիւ ազատ կամօք իյնալ անոր ստից առաջ ու ուխտիւք ասրիլ անոր սուրբ հովանեաց տակը , , այն մօր մը այն տեսակ տուած դասը յաւիտեան իւր գուախաց կուրծքէն չեներ , այնպէս կը արպաւորի անոնց մտաց մէջ , որ եթէ Աստուած մի արասցէ իրենք զիրենք մըրութեան տան , դարձեալ հառաջանօր կը յիշեն , ու գուցէ այն մէկ քանի բառը օր մը զիրենք այն վատ ճամբէն յազգութեան կը բերէ :

(Շարժանիւղի)

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ
ԸՆԴ ԻՄԲԱԳԻՐՆ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ

- 1. — Խմբագրապետ վարդապետն Միսնի և Թմբազիրն Արշալուսոյ 2. — Անցաւոր հիւր վարդապետն :
- 3. — Պ . Ոստանիկ և իւր հարատու թիւնն :

1. — Լուրջ բանագատութիւնը օգտակար է , ասացին Իմաստունք և բաղմիցս յեղեղեցին զայն հրապարակ եւ նող շատ գրիչք . բայց մարդկային անձ նասիրութիւնը կ'խրտչի ամեն ճշմարիտ և լուրջ բանագատութենէ , երբ այն ուղղակի իրենց ընդհարի :

Գրոց լեզուի տարածման համար մեծ փոյթ և եռանդ կը ցուցանէ Արշալուսոյ , գովելի է այդ նախանձաւորութիւնը . բայց յայտնի է որ ամեն կիրք կամ զգացումն իւր օրինաւոր պայմանին ու սահմանին մէջ օգտակար է : Արշալուսոյ ցոյց տուած նախանձաւորութեան պայմանն անցնելով օգտակարութենէ հեռացած է . քանզի անընտրազորքար գովեստ տուած է մի քանի գրուածներու զորո համարած է ճախնակամ յեզու և օրինակ լինելու արժանար : Սոյն թիւր դատողութիւնը ուղղելու համար Միսնի Արժ . Թմբագրապետ վարդապետը բանագատական յօդուած մի հրատարակեց , զոր Թմբազիրն Արշալուսոյ չարաչար և ս'արգաճօք դատապարտութիւն կ'անուանէ , և զնորին արժանաւորութիւնն հակառակորդ կը համարի :

Մէք մեր ամեն թերութիւններն ու տկարութիւնները զգացող լինելով չեմք համարձակիր ինքնակոչ փոխանորդ հանդիսանալ նորին Ս . Եղբայրութեան , որոյ գրական հմտութեան արժէքը սչ միայն յազգայնոց՝ այլ եւ յօտարաց իսկ ծանուցուած և հռչակուած է . խիթալով որ մի գուցէ ազարա սծեմք նորա գեղեցիկ համբաւսին , նա այժմ բացակայ կը գտնուի